

## Կարծիք

Անի Արթուրի Թամազյանի՝ «Լեոնային Ղարաբաղի հակամարտության վերաբերյալ ԵԱՀԿ Մինսկի խմբի փաստաթղթերի խոսույթային և լեզվագործաբանական առանձնահատկությունները» Ժ.02.07 «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Ներկայումս լեզվաբանական հետազոտություններն ընդգրկունորեն վերլուծում են լեզվի կիրառությունն ըստ տարբեր նպատակների՝ մասնավորապես հաղորդակցման գործընթացի արդյունավետության բարձրացման, սոցիալական հարաբերությունների կարգավորման և տարբեր դերակատարների միջև փոխհարաբերությունների ձևավորման ու ազդեցության տեսանկյունից: Լեզվական միջոցների ընտրությունը կարող է առավել կարևոր նշանակություն ունենալ հատկապես, երբ գործ ունենք քաղաքական կամ դիվանագիտական բանակցությունների հետ:

Դիվանագիտական հաղորդակցության ընթացքում կիրառվող լեզվական միջոցները ոչ միայն նպաստում են կողմերի միջև փոխըմբռնման ձևավորմանը, այլև ազդում բանակցությունների ընթացքի և դրա արդյունքների վրա: Այս հանգամանքի կայնորումը և սույն ատենախոսության շրջանակներում լեզվական միջոցների լեզվագործաբանական հատկանիշների ուսումնասիրությունը թույլ է տալիս պարզորոշ հասկանալ, թե ինչպես են ԵԱՀԿ Մինսկի խմբի փաստաթղթերում կիրառվող լեզվական միավորները նպաստել կամ խոչընդոտել Լեոնային Ղարաբաղի հակամարտության խնդրի արդյունավետ լուծմանը: Փաստաթղթերի լեզվագործաբանական վերլուծությունը հնարավորություն է տալիս բացահայտել խոսույթային այնպիսի առանձնահատկություններ, որոնք հանգեցրել են Լեոնային Ղարաբաղի հիմնախնդրի դիվանագիտական կարգավորման գործընթացի անարդյունավետությանը:

Անի Թամազյանի ատենախոսությունը, որը դիտարկում է ԵԱՀԿ Մինսկի խմբի փաստաթղթերի լեզվագործաբանական վերլուծությունը, արդիական է և նորարարական, քանի որ առաջին անգամ համակողմանիորեն ուսումնասիրում է դիվանագիտական խոսույթի լեզվական առանձնահատկությունները՝ բացահայտելով, թե ինչպես են ոչ պատշաճ ձևակերպումները խոչընդոտել Լեոնային Ղարաբաղի հակամարտության կարգավորմանը: Աշխատանքն ընդգրկում է 50 պաշտոնական

փաստաթուղթ (42՝ Լեոնային Ղարաբաղի, 8՝ Կոսովոյի մասին) և հիմնվում է խոսույթային ու լեզվագործաբանական գործիքների՝ խոսքային ակտերի, ցուցայնության և կանխենթադրույթների վերլուծության վրա: Այն լրացնում է դիվանագիտական լեզվաբանության բացը, առաջարկելով մեթոդաբանական մոտեցումներ, որոնք կիրառելի են ոչ միայն ԵԱՀԿ Մինսկի խմբի, այլև այլ միջազգայնային կազմակերպությունների փաստաթղթերի վերլուծության համար: Աշխատանքը կարևոր է ինչպես ակադեմիական, այնպես էլ գործնական մակարդակներում, քանի որ դրա եզրակացությունները կարող են օգտագործվել դիվանագիտական հաղորդակցության դասընթացներում, ինչպես նաև հակամարտությունների կարգավորման ոլորտում լեզվագործաբանական և խոսույթային վերլուծություններ կատարելիս:

Խորհրդանշական է, որ ատենախոսը խորապես տիրապետում է թեմային առնչվող դասական և ժամանակակից լեզվաբանների տեսական դրույթներին՝ միաժամանակ համադրելով տարբեր գիտական մոտեցումներ և վերլուծելով դրանց կիրառելիությունն ու արդիականությունը:

Նշանակալի է նաև, որ վերլուծության հիմք հանդիսացող պաշտոնական փաստաթղթերի զգալի մասը, տեքստը ավելորդ ծանրաբեռնվածությունից զերծ պահելու և լրացուցիչ ծավալ չստեղծելու նպատակով, հիմնականում ներառվել է ատենախոսության Հավելվածներ բաժնում:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի հետազոտության գիտական նորույթը, որն, ինչպես նշում է հեղինակը (սեղմագիր, էջ 5), ներառում է ԵԱՀԿ Մինսկի խմբի փաստաթղթերի խոսույթային և լեզվագործաբանական վերլուծությունը: Հետազոտության կարևորագույն նորամուծությունը լեզվական միավորների խորքային և համակարգված քննությունն է, ինչը նախկինում չի իրականացվել:

Առաջին անգամ փորձ է արվում նկարագրել, վերլուծել և համեմատել ԵԱՀԿ Մինսկի խմբի փաստաթղթերը խոսույթային և լեզվագործաբանական մոտեցումների տեսանկյունից, ինչը ներդրում է ժամանակակից լեզվաբանական հետազոտությունների ոլորտում:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, որոնք բաժանվում են երեքական ենթագլուխների, եզրակացությունից, հավելվածներից և օգտագործված գրականության ցանկից:

Ներածության մեջ հստակ ներկայացվում են ուսումնասիրության հետ կապված հիմնահարցերն ու խնդիրները, վերլուծության մեթոդները, հիմնական գիտական հասկացությունները: Հիմնավորվում են նաև թեմայի ընտրությունը, արդիականությունն ու նորույթը, տեսական ու գործնական արժեքը, որոշակվում ուսումնասիրության նպատակներն ու խնդիրները, ինչպես նաև վարկածային դրույթները:

Ատենախոսության առաջին գլուխը՝ «Դիվանագիտական խոսույթի վերլուծության տեսական մոտեցումները», համադրում է Ջ. Սըրլի, Է. Սեթոուի, Թ. Ա. վան Դեյքի, Գ. Քուքի, Մ. Ֆուկոյի, Գ. Յուլի տեսությունները և միջազգային ու ազգային հետազոտությունները՝ դիվանագիտական խոսույթի լեզվագործաբանական առանձնահատկությունները պարզաբանելու համար՝ տարբերակելով այն քաղաքական խոսույթից: Այստեղ դասակարգվում են դիվանագիտական փաստաթղթերը՝ ներքին (կառավարությունների ներսում) և արտաքին (պետությունների միջև), և ընդգծվում է անզլերենի միջնորդ դերը ԵԱՀԿ Մինսկի խմբի փաստաթղթերի կառուցվածքում: Վերլուծության համատեքստում տարբերակվում են կարճ, հստակ և ազդեցիկ դիվանագիտական հայտարարությունները, որոնք ներկայացնում են որոշակի դիրքորոշում, և չեզոք, մանրամասն զեկույցները, որոնք ապահովում են տեղեկատվության ամբողջականությունն ու հստակությունը: Գլուխն առանձնացնում է երեք լեզվագործաբանական գործիքներ՝ խոսքային ակտերը, ցուցանյությունը (deixis) և կանխենթադրույթային խթանիչները (presupposition triggers), որոնք տեսական ու գործնական նշանակություն ունեն ԵԱՀԿ Մինսկի խմբի փաստաթղթերի հետագա վերլուծության համար:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ «ԵԱՀԿ Մինսկի խմբի հայտարարությունների և զեկույցների պարտվողական խոսույթը՝ որպես Լեռնային Ղարաբաղի հակամարտության պարտության պատճառ», վերլուծում է, թե ինչպես են հուսալքությունը, երկակիությունն ու զգուշավորությունը ԵԱՀԿ Մինսկի խմբի փաստաթղթերում նպաստել դիվանագիտական անհստակությանն ու

հակամարտության կարգավորման դանդաղեցմանը: Ա. Թամազյանը հիմնվում է փաստական տվյալների վրա՝ բացահայտելով, որ կրավորական կառույցները, եղանակավորող բայերը («կարող է», «հնարավոր է», «գուցե») և ոչ վճռական ձևակերպումները («հորդորել», «հույս հայտնել», «առաջարկել») տարածել են անորոշություն, իսկ երկակիությունը, չնայած դիվանագիտական ճկունություն ապահովելու հնարավորությանը, հաճախ դարձել է պատասխանատվությունից խուսափելու միջոց: 16 տարբեր տարիների փաստաթղթերի վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք մեծամասամբ չեզոք (45%) կամ բացասական (44%) տոնայնություն ունեն, ինչը վկայում է դիվանագիտական խոսույթի հոռետեսական բնույթի մասին: Օ. Կալինինի տոնայնության դասակարգման և սենտիմենտ վերլուծության կիրառմամբ հեղինակը բացահայտում է, որ 2010 թվականի դաշտային գնահատման առաքելության զեկույցում օգտագործված «disastrous», «precarious», «ruins», «poor», «unacceptable» բառերը բնորոշում են տարածաշրջանի անբարենպաստ պայմանները՝ նպաստելով պարտվողական խոսույթի ձևավորմանը: Վերլուծությունն ընդգծում է, որ լեզվական միջոցների ռազմավարական կիրառությունը կարող է ինչպես դանդաղեցնել, այնպես էլ բարելավել դիվանագիտական գործընթացները հակամարտությունների կարգավորման համատեքստում:

Ատենախոսության երրորդ գլուխը՝ «Կոսովոյի և Լեռնային Ղարաբաղի հակամարտությունների փաստաթղթերի համեմատական լեզվագործաբանական վերլուծություն», ինչ ներկայացնում է այս հակամարտությունների վերաբերող դիվանագիտական փաստաթղթերի լեզվագործաբանական վերլուծությունը՝ ընդգծելով լեզվական միջոցների ազդեցությունը քաղաքական պատումների ձևավորման և հակամարտությունների ելքի վրա: Հատկանշական է, որ ատենախոսը 3-րդ գլխում ցուցաբերել է հիմնավոր և խորքային մոտեցում՝ սկսելով ՄԱԿ-ի համապատասխան բանաձևերի համեմատական վերլուծությունից: Այս ընտրությունը վկայում է ատենախոսի խորքային ընկալման մասին ոչ միայն թեմայի շրջանակներում, այլև գիտական հետազոտության տրամաբանության, մեթոդական հիմնավորվածության և վերլուծական հետևողականության տեսանկյունից: Գլուխն առանձնանում է խոսքային ակտերի, կանխենթադրույթների, ցուցայնության և գործաբանական ցուցիչների համեմատական վերլուծությամբ, ինչը բացահայտում է,

թե ինչպես են Կոսովոյի փաստաթղթերում գերակշռող հայտարարական ակտերը (23.53%) նպաստել խնդրի լուծմանը, մինչդեռ Լեոնային Ղարաբաղի փաստաթղթերում պերլոկուտիվ ակտերի (33.33%) գերակայությունը սահմանափակել է դիվանագիտական ջանքերի արդյունավետությունը: Վերլուծությունը ցույց է տալիս, որ Կոսովոյի փաստաթղթերում ուժեղ գնահատողական բայերի («condemns», «demands», «authorizes») կիրառությունը նպաստել է անկախության ճանաչմանը, մինչդեռ Լեոնային Ղարաբաղի փաստաթղթերում չեզոք բայերը («encourages», «reaffirms») նվազեցրել են կարգավորման արդյունավետությունը: Արդյունքում, Անի Թամազյանը հիմնավորում է, որ լեզվագործաբանական ռազմավարությունների նպատակային կիրառումը կարող է խթանել կամ սահմանափակել խաղաղ գործընթացները՝ ընդգծելով լեզվի դերն որպես դիվանագիտական ռազմավարական գործիք:

Եզրակացության մեջ ի մի են բերվում ուսումնասիրության արդյունքները, որոնք բխում են ներածությունում առաջադրված խնդիրներից, հետազոտության նպատակից և վարկածային դրույթներից:

Ուստի, կարող ենք վստահորեն եզրակացնել, որ սույն հետազոտությունը լուրջ գիտական աշխատանք է, ունի կոտ կառուցածք, շարադրված է ակադեմիական անգլերենով, յուրաքանչյուր գլխի և ենթագլխի վերջում արված են ամփոփ եզրահանգումներ:

Հարկ եմ համարում նշել, որ ատենախոսի կարևոր արժանիքներն են նյութի լավ իմացությունը, նուրբ դիտողականությունը, ճշգրիտ ու դիպուկ օրինակներով դրույթները լուսաբանելու հմտությունը:

Սկզբունքային դիտողություններ չունենալով հանդերձ՝ կուզենայի անդրադառնալ աշխատանքում ըստ իս տեղ գտած թերությունների և որոշ նկատառումներ հայտնել:

1. Գտնում եմ, որ Կոսովոյի և Լեոնային Ղարաբաղի հակամարտությունների համեմատությունը հետաքրքիր է, այնուամենայնիվ, վերլուծությունը կարող էր ավելի հարստանալ, եթե ներառվեին նաև այլ հակամարտություններ կամ տարածաշրջանային

օրինակներ՝ դիվանագիտական լեզվի կիրառման տարբեր օրինակների ուսումնասիրման համար:

2. Թեպետ դիվանագիտական փաստաթղթերի լեզվական վերլուծությունը հիմնավոր է, գնահատելի կլիներ, եթե նշվեր, թե ինչպես է փաստաթղթերի թարգմանությունը (օրինակ՝ ռուսերենից անգլերեն կամ հակառակը) ազդել հաղորդագրության բովանդակության և իմաստի վրա:
3. Աշխատանքում տեղ են գտել մանր անճշտություններ և որոշ վրիպակներ, ինչպես նաև առկա են խմբագրական բնույթի թերություններ, մասնավորապես էջ 14-ում նկատվում է անորոշ հոդի սխալ օգտագործում. an perception ձևակերպումը պետք է լիներ a perception, քանի որ «perception» բառը սկսվում է բաղաձայնով, էջ 21-ում important բառի փոխարեն նշված է impornat, էջ 21-ում pragmatic marker փոխարեն նշված է pragmatic maker 3 անգամ և այլն):

Միանգամայն ակնհայտ է, որ Անի Թամազյանի «Լեռնային Ղարաբաղի հսկամարտության վերաբերյալ ԵԱՀԿ Մինսկի խմբի փաստաթղթերի խոսույթային և լեզվագործարանական առանձնահատկությունները» ատենախոսությունը աշխատանքը կարևոր գիտահետազոտական ուսումնասիրություն է, համապատասխանում է «Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, բավարարում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող բոլոր պահանջներին, իսկ նրա հեղինակը՝ Անի Արթուրի Թամազյանն արժանի է բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը Ժ.02.07 «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ:

Ընդդիմախոս՝

ԵՊՀ միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի դոցենտ,  
բ.գ.թ. Մ. Յաղուբյան  
13.02.2025

Կասրպյան ԵՏ.

ԵՊՀ զերահան  
Բ.Գ.Թ., 14.02.2025



Հասցե: Երևան, Կոմիտասի պող. 100  
Կոմիտասի պող. 100